Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի մարտի 29 -ի
N 119 -Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի **/այսուհետ՝ Աշխատակազմ/** գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունը **/այսուհետ՝ Վարչություն/** հանդիսանում է Աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Տարածքային կառավարման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Անասնաբուժության մասին», «Տոհմային անասնաբուծության մասին», «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին», «Պարենային անվտանգության ապահովման մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Կերի մասին», «Մեղվաբուծության մասին», «Բույսերի կարանտինի և բույսերի

պաշտպանության մասին, «Սերմերի մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Օրգանական գյուղատնտեսության մասին», «Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին», «Սևանա լճի մասին», «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիրը հաստատելու մասին », «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Թափոնների մասին» և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, «Հողային», «Ջրային», «Անտառային», «Ընդերքի մասին» և այլ Հայաստանի Հանրապետության օրենսգրքերով, ՀՀ Կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի **/այսուհետ՝ Մարզպետ/** որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի **/այսուհետ՝ Գլխավոր քարտուղար/** հրամաններով, Աշխատակազմի ու սույն կանոնադրություններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում /փոփոխում/ է Մարզպետը:

4. Վարչության պետը և աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

5. Վարչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրով: Վարչության տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատում է Մարզպետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Վարչությունը կազմված է Վարչության պետից և համապատասխան մասնագետներից:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունը գյուղատնտեսության ոլորտում՝

1) Մասնակցում է գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզում **/այսուհետ՝ Մարզ/** իրականացվելիք ծրագրերի նախագծերի քննարկմանը, ինչպես նաև գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը.

2) ապահովում է Մարզի տարածքում պարարտանյութերի, դիզելային վառելիքի, սերմացուների պահանջարկի ուսումնասիրությունը, բաշխման գործընթացը, և իրականացնում է մշտադիտարկում գարնանացանի, աշնանացանի և բերքահավաքի աշխատանքներին.

3) ապահովում է Մարզի գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման, պետական և այլ ծրագրերի նախագծերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև Աշխատակազմի տարեկան աշխատանքային ծրագրերի մշակումը.

4) ապահովում է Մարզի գյուղացիական տնտեսություններին ագրարային ոլորտի տնտեսավորող այլ սուբյեկտներին արտադրության կազմակերպման և զարգացման գործում մասնագիտական և խորհրդատվական աջակցություն.

5) մասնակցում է Մարզի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, հակաանասնահամաճարակային պետական ծրագրերի և կարանտինային միջոցառումների իրականացման աշխատանքներին.

6) ապահովում և համակարգում է կենդանիների վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման ու վերացման միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքները. համակարգում է անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները:

7) Մարզպետը լիազոր մարմնի ներկայացմամբ համապատասխան տարածքում՝ համայնքում, բնակավայրում կենդանիների կարանտինային հիվանդությունների բռնկման դեպքում սահմանում և չեղյալ է հայտարարում կարանտինը.

8) աջակցում է պետական վերահսկողական գործառույթների իրականացմանը.

9) իրականացնում է մշտադիտարկում բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ.

10) ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության ծրագրերի ընթացքի վերաբերյալ իրականացնում է մշտադիտարկում.

11) ապահովում է Մարզի տարածքում բնական աղետների հետևանքով առաջացած խնդիրների /կարկտահարություն, ուժեղ քամիներ, ջրհեղեղ, սելավներ, գայլերի հարձակում և այլն/ ուսումնասիրության աշխատանքներ.

12) քննարկում է Աշխատակազմի, ինչպես նաև Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը վերաբերող՝ քաղաքացիների նամակները (դիմումները և բողոքները), որոնք տեղում ուսումնասիրվում և քննարկվում է ու տրվում է համապատասխան լուծումներ.

13) Մարզպետին է ներկայացվում հաշվետվություններ կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային և տարեկան կտրվածքով.

14) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

8. Վարչությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում՝

1) Մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը.

2) աջակցում է արգելոցների, արգելավայրերի հատուկ պահպանվող գոտիների պահպանությանն ու օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը.

3) աջակցում է Մարզի տարածքում բնական ռեսուսների պահպանության և օգտագործման բնագավառում համապատասխան պետական մարմինների տարածքային ծառայությունների և այլ կազմակերպությունների ու անհատ քաղաքացիների գործունեությանը.

4) աջակցում է Մարզի տարածքում բնական պաշարներ օգտագործող օբյեկտների և սյուբեկտների գործունեության համակարգմանը և տեղեկատվության

ներկայացմանը, համակարգում է Մարզի անտառային տարածքներում հակահրդեհային միջոցառումների իրականացման աշխատանքները.

5) կարծիք է տրամադրում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և/կամ շահագործման նպատակով շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ.

6) աջակցում է մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով միջոցառումների ծրագրերի մշակմանը ու միջոցառումների իրականացմանը, <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգման, պահպանման, վերարտադրման և օգտագործման մասին>> ՀՀ օրենսդրության պահանջների կատարմանը.

7) աջակցում է բուսական և կենդանական աշխարհի պահպանության, վերարտադրության ու խելամիտ օգտագործման նպատակով միջոցառումների իրականացմանը, անտառների և անտառային հողերի պահպանության և օգտաագործման նպատակով պետական ծրագրերի իրականացմանը.

8) Վարչությունը հսկողություն է իրականացնում Մարզի տարածքում բնապահպանական օրենսդրությամբ ամրագրված պահպանման ենթակա նորմերի կատարման նկատմամբ և հայտնաբերված իրավախախտումների մասին եռօրյա ժամկետում պատշաճ ձևով տեղյակ է պահում բնապահպանական պետական տեսչության մարզային ստորաբաժանմանը՝ միաժամանակ միջոցներ ձեռնարկելով իրավախախտումը կանխելու համար.

9) Վարչությունը հսկողություն է իրականացնում Մարզի տարածքում լիազոր մարմնի հետ համաձայնեցված և իրենց հաստատած բնապահպանական մարզային ծրագրերին համապատասխան միջոցառումների կատարման նկատմամբ և դրանց ընթացքի մասին պարբերաբար պատշաճ ձևով տեղեկացնում բնապահպանական պետական տեսչության մարզային ստորաբաժանմանը՝ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու համար:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

9. Վարչության աշխատանքը համակարգում է Մարզպետը կամ նրա որոշմամբ Մարզպետի տեղակալը:

10. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետի կողմից հաստատված Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով.

11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

12. Վարչության պետն անմիջական հաշվետու է Մարզպետին:

13. Մարզպետը Վարչության պետի անմիջական ղեկավարն է:

14. Վարչության պետի և աշխատողի /աշխատողների/ ենթակա և հաշվետու պաշտոնները, փոխարինող պաշտոնների անվանումները, աշխատանքների բնույթի, իրավունքների և պարտականությունների, կրթության, որակավորման աստիճանի, մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, անհրաժեշտ կոմպետենցիաների, աշխատանքների կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցրած քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

29.03.2023

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԵԼԻՐ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ